

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**Շեքերտ Հարությունյան**

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ*

---

**Համառոտագիր:** Աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրներին: Այս առումով՝ նոր փուլ մտած դատաիրավական բարեփոխումների առանցքային նպատակն այն է, որ դատական իշխանությունը և դրա ինստիտուցիոնալ կառուցվածքը ոչ միայն ձևականորեն, այլև իրականում նպաստեն լիակատար և պրոֆեսիոնալ արդարադատության իրականացմանը՝ զերծ ցանկացած կամայական միջամտություններից: Հայաստանի Հանրապետությունում անկախ, արդյունավետ, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ, հանրության վստահությունը վայելող դատական համակարգ ունենալու նպատակով տարբեր ժամանակահատվածներում ընդունվել են բազմապիսի իրավական փաստաթղթեր, վավերացվել են միջազգային պայմանագրեր, ներդրվել են նորագույն լուծումներով գործիքներ: Չնայած վերոգրյալին՝ ՀՀ դատական համակարգում դեռևս առկա են մի շարք մարտահրավերներ և խնդիրներ, որոնք պահանջում են համակարգային մոտեցում և համանման լուծումներ: Դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմին Բարձրագույն դատական խորհուրդը կարիք ունի անկախության: Վերջին ժամանակների դատավորների նշանակումները, դատավորների նկատմամբ հարուցված կասկածելի կարգապահական վարույթները և փորձառու ու անկախ դատավորների լիազորությունների դադարումը խորհելու, վերլուծություններ անելու հիմք է տալիս: Ակնհայտ տեսանելի է իշխանության մյուս ճյուղերի և իշխող քաղաքական կուսակցության կողմից դատական իշխանության նկատմամբ իրականացվող ճնշումները: Այդքան քննարկված դատական վեթինգի շրջանակներում տեղի են ունեցել

դատավորների հսկայաձավալ ազատումներ և նշանակումներ: Այսպես՝ ներկայումս պաշտոնավարող 309 դատավորներից 200-ը նշանակվել են 2018 թվականի հեղափոխությունից հետո: Կարծում ենք՝ այս վիճակագրությունը բավականին ցցուն ազդակ է, որպեսզի իրավաբանական համայնքը համախմբվի և համատեղ ջանքերի գործադրումով ճգնաժամից դուրս բերի դատաիրավական համակարգը:

**Բանալի բառեր:** Իրավական և դատական բարեփոխումներ, մասնագիտացված դատարաններ, սահմանադրական բարեփոխումներ, արդար դատաքննություն, դատական իշխանություն, իրավունքի գերակայություն, Վենետիկի հանձնաժողով, Կիևյան հանձնարարականներ:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական համակարգում դատական իշխանությանը գերազանցապես վերապահված է իշխանությունների հավասարակշռման, իրավունքի գերակայության երաշխավորման առաքելություն, ինչն էլ պայմանավորում է իշխանության մյուս ճյուղերից դատական իշխանության լիարժեք անկախությունը: Դատական իշխանության վերոհիշյալ առաքելությունը կարող է կյանքի կոչվել համարժեք անկախություն երաշխավորող պաշտպանվածության, ոչ իրավաչափ միջամտություններից զերծ մնալու պայմաններում: Ընդ որում՝ դատական իշխանության անկախությունը գործառությանին, կառուցակարգային, նյութական և սոցիալական անհրաժեշտ երաշխիքների գործուն լինելու պարագայում միայն կարող է գնահատվել լիարժեք:

Միջազգային չափանիշների, և հատկապես Վենետիկյան հանձնաժողովի կողմից արտահայտած դիրքորոշման համաձայն՝ դատավորների կարգապահությանն առնչվող հարցերով որոշումներ կայացնող մարմինները չպետք է կարգապահական վարույթներ հարուցելու իրավունք ունենան: Ավելին, դրանց կազմում չպետք է լինեն այնպիսի անդամներ, որոնք օժտված լինեն կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությամբ: Վենետիկյան հանձնաժողովի կարծիքով՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու՝ դատարանի նախագահի իրավասությունը կարող է հանգեցնել դատավորի անկախության խաթարման, օրինակ՝ դատարանի նախագահի հետ կոնֆլիկտի: Վենետիկյան հանձնաժողովն արձանագրել է, որ միայն դատավորներից կազմված էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դեպքում առկա է դրա կողմից կորպորատիստ շահեր հետապնդելու վտանգը: Այդ

վտանգը նվազեցնելու մի տարբերակն արդարադատության նախարարի կողմից վարույթ հարուցելու իրավասությունն է, որը կարող է հավասարակշռել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետությունն անկախությանը հաջորդած առաջին իսկ տարիներից ձեռնամուխ եղավ իրավական և դատական բարեփոխումների իրականացմանը՝ ձգտելով իրավունքի գերակայության և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման վրա հիմնված պետականության կայացմանը, որի կարևորագույն գրավականը և նախապայմանն է անկախ և կենսունակ իրավական և դատական համակարգերի առկայությունը: Չնայած այդ նպատակին հասնելու ճանապարհին առաջացած բազմաթիվ մարտահրավերներին և ծառայած դժվարություններին՝ անցած երեք տասնամյակների ընթացքում ներպետական իրավական համակարգում կատարվեցին շոշափելի բարեփոխումներ, որոնց արդյունքում գրանցվեց որոշակի առաջընթաց՝ Հայաստանի Հանրապետության դատական համակարգը ժամանակակից իրավական պետության պահանջներին համահունչ դարձնելու համար: Այնուամենայնիվ, կարևորագույն մարտահրավերներից է շարունակում մնալ դատական իշխանության անկախության, արդյունավետության և ինքնուրույնության ապահովումը, ինչն էլ կերաշխավորի հանրության առջև հաշվետու դատարանի կայացումը: Այս առումով՝ նոր փուլ մտած դատաիրավական բարեփոխումների առանցքային նպատակն այն է, որ դատական իշխանությունը և դրա ինստիտուցիոնալ կառուցվածքը ոչ միայն ձևականորեն, այլև իրականում նպաստեն լիակատար և պրոֆեսիոնալ արդարադատության իրականացմանը՝ զերծ ցանկացած կամայական միջամտություններից, ուստի Սահմանադրությամբ ու միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանություն ապահովող դատական համակարգի ու օրենսդրության առկայությունը և դրանցով պայմանավորված՝ իրավական ու դատական բարեփոխումները շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության գլխավոր առաջնահերթություններից մեկը:

---

<sup>1</sup> Տե՛ս Վենետիկյան հանձնաժողով, Հայաստանի դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ կարծիք, թիվ 893/2017, CDL-AD(2017)019, կետ 135:

Արդար և արդյունավետ դատական իշխանությունն իրավունքի գերակայության, արդար դատաքննության և լիարժեք արդարադատության կարևորագույն նախադրյալներից է, որին ձգտում է մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները բարձրագույն արժեք հռչակած յուրաքանչյուր պետություն (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մաս): Այս ամենն իրականություն դարձնելը ենթադրում է օրենսդրական, ինստիտուցիոնալ, դատավարական և նյութատեխնիկական համալիր միջոցառումների ու աշխատանքների իրականացում: Այս համատեքստում ոչ պակաս կարևոր է դատավորների որակյալության ու արհեստավարժության հիմնախնդիրը, ինչն անմիջական առնչություն ունի նրանց՝ մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում անաչառություն և անկողմնակալություն դրսևորելու հետ: Մեր օրերում դատավորների նշանակման և դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը շարունակում են խնդրահարույց մնալ:

Միջազգային փորձից հայտնի է դատավորների նշանակման (ընտրության) չորս հիմնական մոդել՝ դատավորների նշանակումը քաղաքական մարմինների կողմից, դատավորների նշանակումը դատական իշխանության կողմից, դատավորների նշանակումը դատական խորհրդի կողմից և դատավորների նշանակումն ընտրությունների միջոցով: Այս համատեքստում տեղին է նշել Կիևյան հանձնարարականների 3-րդ կետի հետևյալ ձևակերպումը. «Եթե դատավորների ընտրության խնդիրը որևէ այլ անկախ մարմնի վրա դրված չէ, ապա պետք է ստեղծել առանձին փորձագիտական հանձնաժողով՝ դատավորների ընտրության գործընթացում գրավոր և բանավոր քննություններն անցկացնելու նպատակով: Այս պարագայում դատական խորհրդի լիազորությունները պետք է սահմանափակել պատշաճ ընթացակարգերի պահպանումն ստուգելով և/կամ հանձնաժողովի ընտրած թեկնածուներին նշանակելով կամ նշանակող մարմնին նրանց առաջադրելով»<sup>2</sup>:

ՀՀ Սահմանադրության՝ Բարձրագույն դատական խորհրդին վերաբերող նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում այդ մարմնի՝ սահմանադրական մեծ հեղինակություն ունենալու հանգամանքը՝ հատկապես դատավորների նշանակման,

<sup>2</sup> <https://www.usip.org/sites/default/files/Judicial-Appointments-EN.pdf>: (վերջին մուտք՝ 21.06.2024թ.)

առաջխաղացման ցուցակների կազմման, Հանարապետության նախագահին, Ազգային ժողովին, համապատասխանաբար՝ դատավորների, Վճռաբեկ դատարանի դատավորների, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների և Վճռաբեկ դատարանի նախագահի թեկնածություններն առաջարկելու, դատավորների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրանց ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություններ տալու և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու ու լիազորությունները դադարեցնելու հարցերով: Սահմանադրական նման կարգավորման հիմքում, կարծում ենք, ընկած է այն հանգամանքը, որ Վենետիկի հանձնաժողովը խրախուսում է դատական ինքնակառավարման մարմնում դատավոր և ոչ դատավոր անդամների միջև հավասարակշռման ապահովումը՝ կորպորատիվ կառավարման ռիսկերից խուսափելու համար<sup>3</sup>: Ըստ Կիևյան հանձնարարականների 1-ին մասի 3-րդ կետի՝ «եթե դատավորների ընտրության խնդիրը որևէ այլ անկախ մարմնի վրա դրված չէ, ապա պետք է ստեղծել առանձին փորձագիտական հանձնաժողով՝ դատավորների ընտրության գործընթացում գրավոր և բանավոր քննություններն անցկացնելու նպատակով: Այս պարագայում դատական խորհրդի լիազորությունները պետք է սահմանափակել պատշաճ ընթացակարգերի պահպանումն ստուգելով և/կամ հանձնաժողովի ընտրած թեկնածուներին նշանակելով կամ նշանակող մարմնին նրանց առաջադրելով»<sup>4</sup>: Իսկ միևնույն հանձնարարականների 2-րդ մասի 23-րդ կետի համաձայն՝ «եթե դատավորի վերջնական նշանակումը կատարում է պետության նախագահը, ապա նշանակելու հայեցողությունը պետք է սահմանափակվի ընտրող մարմնի (օրինակ՝ դատական խորհուրդ, որակավորման հանձնաժողով կամ փորձագիտական հանձնաժողով) առաջադրած թեկնածուների շրջանակով: Այդպիսի թեկնածուի նշանակումը կարող է մերժվել միայն ընթացակարգային հիմքերով, ընդ որում՝ պատճառաբանված որոշմամբ»<sup>5</sup>: Կարծում ենք, այս դրույթին համամիտ լինելով՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական բարեփոխումների նախագծի հեղինակները Սահմանադրության 166-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանի դատավորների, դրա պալատների նախագահների, վերաքննիչ և առաջին աստիճանի

<sup>3</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի թիվ 12 հանձնարարական (2010թ.):

<sup>4</sup> Տե՛ս «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ» Կիևյան հանձնարարականներ, ք. Կիև, 23-25.06.2010թ., էջ 3:

<sup>5</sup> Տե՛ս Նույն տեղում էջ 9:

դատարանների դատավորների ու դրանց նախագահների նշանակումը վերապահել են ՀՀ նախագահին՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ: Բարձրագույն դատական խորհրդին է վերապահվել նաև դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները հաստատելու լիազորությունը: Դատական իշխանության և դատավորների անկախությունն իրավունքի գերակայության ապահովման հիմնաքարն է և պետք է պաշտպանվի՝ ի նպաստ հանրության և քաղաքացու, այլ ոչ դատավորի շահերի: Սակայն դատավորի անկախությունն ուղղակիորեն կախված է նրա պատասխանատվությունից և դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության նախապայման է: Հետևաբար, դատավորների նկատմամբ պատշաճ կարգապահական մեխանիզմներն անհրաժեշտ են հասարակության նկատմամբ նրանց պատասխանատվության ապահովման համար: Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը հաճախ օգտագործվում է նաև որպես դատավորների անկախությանը միջամտելու և հետապնդման միջոց: Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներն օրենքի մեկնաբանության և փաստերի գնահատման համար հաճախ հանդիպող երևույթ են, ավելին՝ նրանք կարող են հետապնդվել պատասխանատվության ոչ պատշաճ միջոցի կիրառմամբ և այլ մեթոդներով: Հետևաբար, դատավորի նկատմամբ կիրառված ցանկացած կարգապահական գործընթաց և միջոց պետք է կարգավորվի օրենքով, որոնք կապահովեն դատավորի համար պատշաճ երաշխիքներ և կբացառեն դատավորի նկատմամբ ցանկացած անհարկի հետապնդում և միջամտություն նրա դատական գործունեությանը: Միջազգային չափանիշների համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ընթացակարգերը պետք է իրականացվեն անկախ մարմնի կողմից, հստակ և օբյեկտիվ հիմքերի հիման վրա, առանց հապաղումների և դատավորի համար արդար դատաքննության երաշխիքների խստիվ պահպանմամբ, այդ թվում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորությամբ: Վենետիկյան հանձնաժողովը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում առանձնակի կարևորել է պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակության

հարցը<sup>6</sup>: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ իր կարծիքում Վենետիկյան հանձնաժողովն արձանագրել է, որ «(...) կարգապահական պատասխանատվության հանգեցնող արարքը պետք է ձևակերպված լինի բավարար հստակությամբ, որպեսզի հնարավորություն տա անձին կանխատեսելու իր արարքների հետևանքները և հետևաբար՝ կարգավորելու դրանք: Կարգապահական պատասխանատվության հիմքերի առավել մանրամասն նկարագրությունը նաև կնպաստի դրանց սուբյեկտիվ և հայեցողական կիրառման սահմանափակմանը»:

Իրավունքի գերակայության ապահովումը հնարավոր է միայն իշխանության հենց այս ճյուղի լիարժեքության պայմաններում: Անկախության ձեռքբերմամբ Հայաստանի Հանրապետությունն ընտրել է հենց իրավական պետություն կառուցելու դժվարին ճանապարհը, որի ընթացքում, ինչպես տեսանք, անհրաժեշտ եղան բազմաթիվ բարեփոխումներ, որոնց արդյունքում նաև մի շարք սահմանադրական սկզբունքների ու արդի նպատակների ամրագրում, ինստիտուտների հիմնում, կառավարման ձևի փոփոխություն և այլն: Այս գործընթացը պետք է տա ցանկալի վերջնարդյունք, որի միակ գնահատողը կլինի հենց հասարակությունը:

Հույսով հավատացած լինենք, որ աշխատանքում առաջադրված խնդիրները կլուծվեն մոտալուտ սահմանադրական բարեփոխումների ընթացքում՝ նոր որակ հաղորդելով դատական համակարգին ընդհանուր առմամբ, վերափմաստավորելով հանրապետությունում դատական իշխանությունը կրողների իրավամտաճողությունը, նպաստավոր պայմաններ ստեղծելով իրավակիրառ պրակտիկայում ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավանորմերի լիարժեք իրացման համար:

Ցավոք, մտավախություն ունենք, որ սահմանադրական բարեփոխումների պատասխանատու կկարգվեն կասկածելի անցյալով, ոչ հայեցի ներկայով ոլորտի ոչ գիտակ, ոչ փորձառու չակերտավոր մասնագետներ, որոնց նախաձեռնած բարեփոխումների տակ տեղադրված են լինելու սահմանադրական խոր ճգնաժամի մեջ գտնվող մեր պետության համար վտանգավոր ականներ:

---

<sup>6</sup> Տե՛ս Վենետիկյան հանձնաժողով, Հայաստանի դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ կարծիք, թիվ 893/2017, CDL-AD(2017)019, կետ 65:



---

# BASIS OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY OF THE JUDICIAL AUTHORITY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REFORMS

**Herbert Harutyunyan**

*PhD student at the YSU*

*Chair of Constitutional Law*

---

**Summary:** The work is dedicated to the issues of constitutional responsibility of the judiciary of the Republic of Armenia. In this regard, the key goal of the new phase of judicial reforms is that the judiciary and its institutional structure not only formally but also actually contribute to the implementation of full and professional justice, free from any arbitrary interference. In order to have an independent, effective, corruption- and patronage-free judicial system in the Republic of Armenia, which enjoys the trust of the public, various legal documents have been adopted, international agreements have been ratified, and tools with the latest solutions have been introduced. Despite the above, there are still a number of challenges and problems in the judicial system of RA that require a systemic approach and similar solutions. An independent state body guaranteeing the independence of courts and judges The Supreme Judicial Council needs independence. Appointments of judges in recent times, suspicious disciplinary proceedings initiated against judges and termination of powers of experienced and independent judges provide grounds for reflection and analysis. The pressures exerted on the judiciary by other branches of government and the ruling political party are clearly visible. The much-discussed judicial vetting has seen massive firings and appointments of judges. Thus, 200 of the 309 currently serving judges were appointed after the 2018 revolution. We think this statistic is a strong incentive for the legal community to come together and bring the judicial system out of the crisis through joint efforts.

**Keywords:** legal and judicial reforms, specialized courts, constitutional reforms, fair trial, Judicial Power, rule of law, Venice Commission, Kiev instructions.

---

# ОСНОВЫ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ СУДЕБНОЙ ВЛАСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ

**Герберт Арутюнян**

*Соискатель кафедры*

*конституционного права ЕГУ*

---

**Аннотация:** Работа посвящена вопросам конституционной ответственности судей Республики Армения. В связи с этим ключевой целью нового этапа судебной реформы является то, чтобы судебная власть и ее институциональная структура не только формально, но и фактически способствовали осуществлению полноценного и профессионального правосудия, свободного от любого произвольного вмешательства. Для того, чтобы иметь в Республике Армения независимую, эффективную, свободную от коррупции и патронажа судебную систему, пользующуюся доверием общественности, приняты различные правовые документы, ратифицированы международные соглашения, а также инструменты с новейшими решениями. были представлены. Несмотря на вышесказанное, в судебной системе РА все еще существует ряд вызовов и проблем, которые требуют системного подхода и подобных решений. Независимый государственный орган, гарантирующий независимость судов и судей. Высший судебный совет нуждается в независимости. Назначения судей в последнее время, подозрительные дисциплинарные производства, возбужденные против судей, прекращение полномочий опытных и независимых судей дают основания для размышлений и анализа. Давление, оказываемое на судебную систему со стороны других ветвей власти и правящей политической партии, явно заметно. Широко обсуждаемая проверка судей привела к массовым увольнениям и назначениям судей. Таким образом, 200 из 309 ныне действующих судей были назначены после революции 2018 года. Мы считаем, что эта статистика является сильным стимулом для юридического сообщества объединиться и совместными усилиями вывести судебную систему из кризиса.

**Ключевые слова:** правовые и судебные реформы, специализированные суды, конституционные реформы, справедливое судебное разбирательство, Судебная власть, верховенство закона, Венецианская комиссия, Киевская инструкция.

Հոդվածը գրված է՝ 21.06.2024թ.  
Ներկայացվել է 28.06.2024թ.